



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 մարտի 2015թ.

N 66 -Ա

ք.Ստեփանակերտ

### ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասին և 48-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է**.

1. Սահմանել, որ

1) թեկնածուներին, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները գրանցելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, գրանցում իրականացրած ընտրական հանձնաժողովը թեկնածուի, կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցչին տալիս է կազմավորված ընտրական տեղամասերի թվի եռապատիկից ոչ ավելի թվով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից կնքված վստահված անձանց վկայականներ՝ ներկայացրած հայտի հիման վրա՝ համաձայն հավելվածի.

2) վստահված անձի վկայականում թեկնածուի անուն, հայրանուն, ազգանունը կամ կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը նշվում է գրանցում իրականացրած ընտրական հանձնաժողովի կողմից.

3) տարածքային ընտրական հանձնաժողովներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից վստահված անձանց վկայականներ տրամադրվում են սույն մասի 1-ին կետում նշված հայտի հիման վրա ներկայացված գրավոր պահանջի դեպքում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կենտրոնական ընտրական հանձնաժողովի  
2015 թվականի մարտի 20 -ի N 66-Ա որոշման

Ձև

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

զբանցումն իրականացրած ընտրական հանձնաժողովի անվանումը

**ՀԱՅՏ**

**ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ**

20 \_\_\_\_\_ թվականի \_\_\_\_\_ -ի \_\_\_\_\_  
ընտրության անվանումը

ընտրությանը \_\_\_\_\_  
թեկնածուի անուն, ազգանունը, կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը

շահերը ներկայացնելու նպատակով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
ընտրական օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն, խնդրում եմ ինձ տրամադրել  
վստահված անձի վկայական՝ թվով \_\_\_\_\_ հատ:

\_\_\_\_\_ թեկնածուի կամ լիազոր ներկայացուցչի անուն, ազգանուն

\_\_\_\_\_ ստորագրություն

\_\_\_\_\_ 20 \_\_\_\_\_ թ.

-----

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության \_\_\_\_\_  
զբանցումն իրականացրած հանձնաժողովի անվանումը  
ընտրական հանձնաժողովից ստացա վստահված անձի վկայական՝ \_\_\_\_\_ հատ:

\_\_\_\_\_ թեկնածուի կամ լիազոր ներկայացուցչի անուն, ազգանուն

\_\_\_\_\_ ստորագրություն

\_\_\_\_\_ 20 \_\_\_\_\_ թ.

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**